չէ միայն, որ անհատի մի կամ բարեբար հաստատութեան մի անցեալը վարժատունի, այլ մանաւանդ անոր ապագայն ապահովուի: Կը յուսանք թէ Զմիւռնիոյ Հայ **ընթերցասէր** վարչութիւնն իսկ՝ աւելի այս վերջին կէտիս վրայ պիտի դարձնէ իր քաղաքացի և օտարերկրեայ ազգայնոց ուշադրութիւնն, և ամէն միջոց ի գործ պիտի դնէ անոր ապագայն ապահովցնելու. որ կ՚ըլլայ նախ հաստատուն դրամագլուխ մի հայթհայթելով և ապա յայլ և այլ դասակարգութիւններէ բանիրուն վարչութիւն մի կազմակերպելով՝ հասուն գլխոյ մի ներքև, որ լուրջ և միանգամայն ազդեցիկ դեր մի խաղալու բաւականութիւնն ունենայ: Այս ակնկալութեամբ կ՚ողջունենք յիշեալ հաստատութեան 25ամեակն և կը մաղթենք անոր լիուլի յաջողութիւն և երջանիկ ապագայ:

---

**ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ.** — *Ստացանք հետեւեալ շահեկան գրեանքը հանդերձ շնորհակալեաց:*

**Ա.** — *Ռ. Պատկանեանի* **ԸՆՏԻՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.** *խմբագրութեամբ Գր. Խալաթեանի, երկու հատոր. ա. հատոր* **ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ** *և բ. հատոր* **ԱՐՁԱԿ ԳՐՈՒԱԾՆԵՐ.** *հեղինակին 2 պատկերով, ինքնագրով, կենսագրական նկարագրով և Նոր-Նախիջևանցոց լեզուի համառօտ Բառգրքով. Հրատարակեց Վաղվառէ Քանանեան, յօգուտ Ռ. Պատկանեանի ընտանեաց. Տպ. ի Պետերբուրգ. Տպարան Յ. Լիբերմանի. գինն է Ա և Բ հատորին՝ 4 ռուբլի (կամ 10 ֆրանք). Հրատարակչի հասցէն.* **Տ. ՎԱՌՎԱՌԷ ՔԱՆԱՆԵԱՆ** *Մոսկուա, Լազարեան Ճեմարան:*

**Բ.** — **ՏԱՂՔ ԵՒ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆՔ, ՆԱՄԱԿԱՆԻՔ, ԴԱՄԲԱՆԱԿԱՆ, ՏԱՊԱՆԱԳԻՐ** *Պետրոս Դուրեանի, հաւաքեց Բարսեղ Ե. Էքսերճեան. Տպ. Կ. Պոլիս. գրատուն Պ. Պալենց, գինն է 15 ղրուշ:*

**Գ.** — **ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ** *ա. տարի, գրեց Թովմաս Աճեմեան, Ուսուցիչ Հայ դպրութեանց, Տպ. ի Նոյն, գինն է 3 ղրշ:*

**Դ.** — **ԾԱՂԿԱՓՈՒՆՋ ՄԱՆԿԱՆՑ** *կամ* **ԸՆԹԵՐՑԱՐԱՆ,** *մասն ա. պատկերազարդ, յօրինեց Սիմոն Ֆէշեկեան, Տպ. ի Նոյն գինն է 2 ղրշ:*

**Ե.** — **ՆՈՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ** *պատկերազարդ* **ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ,** *ի պէտս. Հայ ուսանողաց, գրեց Գ. Թերզեան, Տպ. ի Նոյն, գինն է 1 ղրշ. 20 փարայ:*

**Զ.** — **ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ.** *Տպ. Թիֆլիս, տպարան Մ. Շարիձէի, գինն է 40 կոպ:*

digitised by A.R.A.R.@